ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<24>> հունիսի 2014թ. N 47

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի հունիսի 20-ի N120-Ա և 2014 թվականի հունիսի 23-ի N123-Ա որոշումները, <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Հ. Հարությունյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին (Հ. Հարությունյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սուսաննա Միրզոյանին և նույն ընկերության գլխավոր հաշվապահ Սոնա Հայրապետյանին (համաձայնությամբ):
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2014 թվականի հունիսի 24-ի
N 47 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Հարությունյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ.

Անդամներ՝

Վ. Ալեքսանյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության վարչության գլխավոր մասնագետ.

Լ. Հարությունյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի գլխավոր մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**